

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԴԼՈՅԱՆ ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԻ

ԲԱՅ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՌԻՆՈԼԱԼԻԱՅՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ  
ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՄԻՆՉՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
(Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ  
մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Ս. Գ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բժշկական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Ս.Վ. Գրիգորյան  
Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Ա.Վ. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2019թ. հունվարի 31-ին ժամը 12.00, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ.դեկտեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
մանկավարժական  
գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա. Հ. Ավաջյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Զարգացման խանգարումների համակազմում էական թիվ են կազմում վերին շուրթի և քիմքի բնածին ճեղքվածք ունեցող երեխաները: Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների այս խնդրի հաճախականությունն աշխարհում կազմում է 1:700:

Խնդրո առարկայի շուրջ մասնագիտական գիտամեթոդական գրականության մեջ ներկայացված են մի շարք հետազոտություններ տարբեր տեսանկյուններով, դիտարկվել են հիմնախնդրի լուծման բազմազան ուղիներ(Վանսովսկայա Լ. Ի. 2000, Վասիլևա Ե.Պ. 2011, Գոնչակով Գ. Վ, Պրիտիկո Ա. Գ, Գոնչակովա Ս. Գ, 2009, Չեկուսովա, Յու. Գ., 2015 և այլք), սակայն մեր հետազոտության տեսանկյունից այն գրեթե ուսումնասիրված չէ:

Կապակցված խոսքի զարգացումը կարևորագույն նշանակություն ունի երեխայի ընդհանուր զարգացման, իսկ հետագայում՝ նաև դպրոցում ուսումնական ծրագրի լիարժեք յուրացման համար (Ն. Ֆ. Վինոգրադովա, Օ. Ս. Ուշակովա, 1979, Մ. Մ. Ալեքսեևա, Բ. Ի. Յաշինա, 1999, 2000, Օ. Ս. Ուշակովա, 2001, Վ. Պ. Գլուխով, 2004, Ս. Ա. Մարոյան, Ա. Մ Դալլաքյան, 2008, Զ. Գյուլամիրյան 2009, Կարապետյան Ս. Գ., Կիրակոսյան Ա., 2015, Վալյավկո Ս. Մ., Շուկեկինա Յու Ա, 2016 և այլք):

Այս համատեքստում մեր կողմից ուսումնասիրվող հիմնահարցն առավել է արժևորվում հաշվի առնելով, որ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի (14.04.1999թ.) Հայաստանի Հանրապետությունում 2006-2007 թթ. ուս. տարուց իրականացվում է տասներկուամյա միջնակարգ կրթություն՝ եռաստիճան համակարգով, ըստ որի «Ուսումնական հաստատություններ են ընդունվում այն երեխաները, որոնց վեց տարին լրանում է մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ»: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մասնագիտական գիտամեթոդական գրականության շրջանակներում (Ա. Գ. Իպպոլիտովա, 1983, Ի. Ի. Երմակովա, 1996, Լ. Ա. Զայցևա, Ի. Ս. Զայցև, Ս. Ֆ. Լևյաշ, Ի. Ն. Յասովա, 2001, Ե. Ա. Սորոլևա, 2006, Ուկլոնասկայա Դ. Վ, Ազաևա Վ. Ե. 2016 և այլք) մեր կողմից իրականացված տեսական ուսումնասիրություններն ակնառու փաստում են, որ տվյալ խնդրի լուծումը մինչև իրահատական շրջանում գրեթե բոլոր հեղինակների կողմից ներկայացվում է հիմնականում ձայնի տեմբրի և հնչարտաբերման կարգավորման նպատակով նախապատրաստական աշխատանքների իրականացման տեսանկյունից: Մեր հետազոտության առարկան տվյալ խնդրի շրջանակներում գրեթե չի ուսումնասիրվել:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դեռևս շատ աղոտ է լուսաբանված, թե ինչպես է ձևավորվում այս երեխաների կապակցված խոսքը, ինչ առանձնահատկություններ ունի այն և լոգոպեդական աշխատանքի ինչպիսի մոտեցումներ է անհրաժեշտ կիրառել

դեռևս մինչվիրահատական շրջանում:

Հիմնախնդրի արդիականությունը հավաստում է նաև այն փաստը, որ խնդրո առարկայի շուրջ հետազոտությունները սակավ են, մայրենի լեզվով բացակայում է մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը:

Հիմնախնդրի տեսականորեն և գործնականորեն ոչ լիարժեք մշակված լինելու փաստն է՛լ ավելի է ընդգծում սույն հետազոտության արդիականությունը, նրա տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը:

**Հետազոտության նպատակը:** Մշակել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված մանկավարժական միջոցներ և մեթոդներ:

**Հետազոտության օբյեկտը:** Մինչվիրահատական շրջանում 3-4 տարեկան բաց օրգանական ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման գործընթացն է:

**Հետազոտության առարկան:** Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման մանկավարժական ուղիներն են, միջոցները, մեթոդները:

**Հետազոտության վարկածը** ենթադրում է, որ մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացումը կլինի արդյունավետ, եթե այն անցկացվի.

● կապակցված խոսքի ձևավորման նախադրյալների՝ խոսքի բառաքերականական կառույցի և բարձրագույն հոգեկան գործընթացների զարգացման ճանապարհով,

● կապակցված խոսքի ձևավորման՝ մեր կողմից բացահայտված առանձնահատկությունների հաշվառմամբ,

● մեր կողմից առաջարկված և փորձարարությամբ հիմնավորված միջոցների, մեթոդների գործադրմամբ և լոգոպեդական աշխատանքի անցկացման պայմանների հաշվառմամբ,

● կապակցված խոսքի զարգացման նպատակով երեխա-ընտանիք-լոգոպեդ համագործակցային մոդելի շեշտադրմամբ: Այս դեպքում հնարավոր կլինի ստեղծել և մշակել մինչվիրահատական շրջանում կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ:

Նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը սահմանում են հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել կապակցված խոսքի զարգացման ժամանակակից մոտեցումներն ընդհանուր և հատուկ մանկավարժության մեջ

2. Ուսումնասիրել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի դրվածքը ՀՀ-ում

3. Բացահայտել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման առանձնահատկությունները

4. Մշակել բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանը միտված միջոցներ, մանկավարժական ուղիներ և փորձարարությամբ հիմնավորել դրանց կիրառման արդյունավետությունը:

#### **Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝**

- անձի ձևավորման և զարգացման համար առաջատար գործունեության դերի տեսությունը (Բ. Բ. Էլկոնին 1978, Ա. Ն. Լեոնտև, 1974)

- կապակցված խոսքի զարգացման վերաբերյալ լեզվաբանական, հոգելեզվաբանական, լոգոպեդական մոտեցումները (Ա. Ռ. Լուրիա, 1979 Վ. Կ. Վորոբյովա, 2006 Ռ. Ի. Լալանա, 1999, Զ. Գյուլամիրյան, 2009, Վ. Պ. Գլուխով, 2005)

- գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (Պ. Յա. Գալպերին, 1985)

- երեխայի զարգացման գործընթացում լեզվի նշանակության, խոսքի և մյուս հոգեկան գործընթացների փոխկապակցվածության դրույթները, խոսքային գործունեության տեսությունը (Ա. Ա. Լեոնտև, 1971, Ա. Ռ. Լուրիա, 1979)

- խոսքի խանգարում ունեցող երեխաների համակարգային ուսուցման և դաստիարակության մասին հայեցակարգը (Ռ. Ե. Լևինա, 1961, Տ. Բ. Ֆիլիշևա, Գ. Վ. Չիրկինա, 1985):

- երեխաների ուսուցման ընթացքում զարգացման մոտակա գոտու մասին տեսությունը (Լ. Ա. Վիգոտսկի, 1932)

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները.**

- տեսական՝ հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականության, փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն, տվյալների համեմատում, ընդհանրացում, ամփոփում,

- էմպիրիկ՝ դիտում, զրույց, հարցում, անկետավորում, փորձարարական ուսուցում, հետազոտվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն

- վիճակագրական մեթոդներ՝ հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն և մաթեմատիկական մշակում:

#### **Հետազոտության գիտական նորույթը.**

- ուսումնասիրվել է մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի մոտեցումները <<-ում

- բացահայտվել են մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի առանձնահատկությունները

- փորձարարության արդյունքում բացահայտվել են մինչվիրահատական

շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի լիարժեք զարգացմանը խոչընդոտող նախադրյալները

- մշակվել և գործնականում ներդրվել է մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանը միտված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ:

- մշակվել են մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված հայերեն լեզվով հատուկ խաղեր, վարժություններ, առաջադրանքներ, տեքստեր:

- մշակվել են բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների ընտանիքներին ցուցաբերվող մեթոդական աջակցության մոտեցումները:

**Հետազոտության տեսական նշանակությունը:** Տեսականորեն հիմնավորվել է մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման ժամանակակից մեթոդաբանությունը: Ուսումնասիրության արդյունքները, հատուկ մանկավարժությունը կարող են հարստացնել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման վերաբերյալ նոր մեթոդական մոտեցումներով:

**Հետազոտության գործնական նշանակությունը** որոշվել է մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման միջոցների, հնարների, մեթոդների, մոտեցումների, ինչպես նաև մայրենի լեզվով կազմված խաղերի, առաջադրանքների, հանձնարարությունների համակարգմամբ և գործնականում դրանց ներդրմամբ: Ատենախոսության նյութերն ու մեթոդական մոտեցումները կարող են օգտակար լինել մանկավարժական բուհերի սկզբնական կրթության, հատուկ և ներառական կրթության ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, լոգոպեդների, դիմաձնոտային վիրաբույժների, մանկաբույժների, ծնողների համար:

**Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են.**

1. Բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաներին բնորոշ են ոչ միայն ձայնի տեմբրի և հնչարտաբերման խանգարումներ, այլ նաև կապակցված խոսքի զարգացման խնդիրներ: Կապակցված խոսքի զարգացման շուրջ մինչվիրահատական շրջանում համակարգված լոգոպեդական աշխատանք չի իրականացվում, ինչը յուրովի անդրադառնում է նրանց սոցիալական հարմարեցմանը:

2. Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի առանձնահատկությունները դրսևորվում են տեքստերի փոքր ծավալով, տեքստում համառոտ նախադասությունների գերակշռմամբ, տեքստի շրջանակներում պատճառահետևանքային հարաբերությունների արտահայտման դժվարություններով, խոսքի բառաքերականական ձևակերպման խնդիրներով, ինչպես նաև

խոսքալսողական ուշադրության և հիշողության յուրահատկություններով:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի համակարգ՝ խոսքի բառաքերականական կառույցի, խոսքալսողական ուշադրության և հիշողության զարգացումը և սոցիալական շփման հնարավորությունների ընդլայնումը դիտարկելով, որպես կապակցված խոսքի զարգացման համար կարևոր նախադրյալներ:

3. Առաջարկված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը, ներդրված մանկավարժական միջոցները, մեթոդները և պայմանները նպաստում են մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանը:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն** ապահովված են հետազոտվող քանակակազմի բավարար ծավալով, հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փաստացի նյութի քանակական և որակական վերլուծությամբ, հետազոտության արդյունքներով և լոգոպեդական պրակտիկայում դրանց ներդրմամբ: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն որոշվում է նաև հեղինակի հրատարակումներով, ելույթներով և աշխատանքի արդյունքների լայն քննարկումներով:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունն ու ներդրումը:**

Հետազոտության արդյունքների պաշտոնական քննարկումն անցկացվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության (ներկայիս՝ լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի) ամբիոնի նիստերում, գիտամեթոդական կոնֆերանսներում (2013-2016 թթ.), ք. Երևանի թիվ 39 նախադպրոցական ուսումնական հաստատության խորհրդի նիստերում, ք. Երևանի թիվ 20 պոլիկլինիկայում, ինչպես նաև հեղինակի կողմից հրապարակված աշխատություններում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով՝ 131 էջով: Այն կազմված է ներածությունից, երեք գլխից, հետևություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության բնագիրը պարունակում է 16 աղյուսակ, 8 տրամագիր, 4 հավելված:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածության** մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, սահմանված են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները,

գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին՝ «Հիմնահարցի դրվածքը»** խորագրով գլուխը կազմված է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Ռինոլալիան որպես բժշկահոգեբանամանկավարժական հիմնահարց»** ենթագլխում դիտարկվել և վերլուծվել են մանկավարժության՝ ընդհանուր և հատուկ մանկավարժության, հոգեբանության և բժշկության բնագավառում խնդրո առարկայի շուրջ ուսումնասիրությունների արդյունքները: Ներկայացված է «բաց օրգանական ռինոլալիա» եզրույթը, մեկնաբանված են առաջացման պատճառները, ախտահարման մեխանիզմը, ուսումնասիրման հոգեբանամանկավարժան, հոգեբանական, ֆիզիոլոգիական, կլինիկական տեսանկյունները:

Հաստատված է, որ ուսումնասիրվող հիմնահարցն արդիական է և բժշկահոգեբանամանկավարժական ոլորտում ունի տեսագործնական ու սոցիալական կարևոր նշանակություն:

Երկրորդ՝ **«Բաց օրգանական ռինոլալիայի մեկնաբանման հոգեբանամանկավարժական տեսանկյունները»** ենթագլխում ներկայացված է ձայնի տեմբրի, հնչարտաբերման խանգարումների բնութագիրը, վերլուծված են խոսքի զարգացման առանձնահատկությունները: Արժևորելով խոսքն որպես բարձրագույն հոգեկան գործընթաց և խոսքի ու մյուս բարձրագույն հոգեկան գործընթացների փոխկապվածությունը՝ տվյալ ենթագլխում ուսումնասիրվել և վերլուծվել են նաև բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների բարձրագույն հոգեկան գործընթացների առանձնահատկությունները:

Թեև բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի մոտեցումներն ուսումնասիրված են, սակայն հիմնախնդիրը մեր ուսումնասիրության առարկայի տեսանկյունից գրեթե չի դիտարկվել և հետագա հետազոտությունների կարիք ունի:

Երրորդ՝ **«Կապակցված խոսքի վերլուծությունը լեզվաբանական, հոգեբանական և մանկավարժական տեսանկյուններից»** ենթագլխում ներկայացված և վերլուծված է կապակցված խոսքը որպես լեզվական միավոր: Մեկնաբանված է, որ կապակցված խոսքն ենթադրում է ընդարձակ իմաստային արտահայտություն, որն ապահովում է հաղորդակցումը և փոխըմբռնումը:

Խնդրո առարկայի շուրջ մասնագիտական գիտամեթոդական գրականության վերլուծությունը փաստում է, որ կապակցված խոսքն ունի իր ուրույն կառուցվածքը, իր տեսակները, գործառույթները, ձևավորման օրինաչափությունները, անհրաժեշտ պայմանները:

Հիմնահարցի շուրջ հետազոտությունները փաստում են, որ կապակցված խոսքն արտացոլում է երեխայի ընդհանուր զարգացման մակարդակը՝ մտավոր, խոսքային և հուզական: Կապակցված խոսքի զարգացումը հատկապես

արժևորվում է մանկավարժության մեջ երեխայի ընդհանուր զարգացման, իսկ հետագայում՝ դպրոցական ծրագրի լիարժեք յուրացման համատեքստում (Ե. Ա. Սմիրնովա, 1990, Ն. Գ. Սնոլկինա, Օ. Ս. Ուշակովա, 1990, Լ. Գ. Շադրինա, 2012, Ե. Վ. Տուպիկովա, 2015 և այլք):

Առաջին գլխի **չորրորդ՝ «Հիմնախնդրի հիմնավորումը, խնդիրները, փուլերը և կազմակերպումը»** ենթագլխում ներկայացված են հետազոտության մասնավոր խնդիրները, մեթոդները և անցկացման փուլերը:

Մասնագիտական գիտամեթոդական գրականության տեսական վերլուծության արդյունքներն ընդհանրացնելով՝ պետք է նշել, որ խնդրո առարկայի շուրջ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն տվյալ խնդրի լուծումը գրեթե բոլոր աշխատանքներում դիտարկվում է միայն ձայնի տեմբրի և հնչարտաբերման կարգավորման նպատակով նախապատրաստական աշխատանքների իրականացման տեսանկյունից: Ներկայացված հիմնախնդիրն արդիական է, մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունևոլալիա ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքում կապակցված խոսքի զարգացմանն ուղղված մեթոդական համակարգը բացակայում է, որն էլ նվազեցնում է կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը և խոչընդոտում է նրանց լիարժեք սոցիալական հարմարեցմանը: Մեր հետազոտության առարկան տվյալ խնդրի շրջանակներում գրեթե չի ուսումնասիրվել:

Մասնավորապես, դեռևս շատ աղոտ է լուսաբանված նաև այն հարցը, թե ինչպես է ձևավորվում այս երեխաների կապակցված խոսքը, ինչ առանձնահատկություններ ունի այն և լոգոպեդական աշխատանքի ինչպիսի մոտեցումներ է պետք կիրառել մինչվիրահատական շրջանում:

**Ատենախոսության երկրորդ՝ «Բաց օրգանական ունևոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի հետազոտումը մինչվիրահատական շրջանում»** խորագրով գլուխը կազմված է չորս ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունևոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություն»** ենթագլուխը նվիրված է հետազոտվող խնդրո առարկայի շուրջ դիմաձնոտային վիրաբույժների, ծնողների, լոգոպեդների մոտեցումների և իրազեկության ուսումնասիրմանը: Անցկացվել է անկետավորում, հարցում, զրույց, որին մասնակցել են 97 լոգոպեդ, 40 դիմաձնոտային վիրաբույժ և 40 ծնող:

Խնդրո առարկայի շուրջ սոցիալացման արդյունքների վերլուծությունը փաստում է, որ լոգոպեդների ճնշող մեծամասնության կողմից մինչվիրահատական շրջանում աշխատանքներ են տարվում միայն ձայնի և հնչարտաբերման խանգարումների կարգավորման նպատակով անհրաժեշտ նախադրյալների ձևավորման ուղղությամբ: Մինևոյն ժամանակ բնութագրելով

այս երեխաների կապակցված խոսքը՝ լոգոպեդիների 64.9%-ը նշում են, որ այն որակապես տարբերվում է խոսքի բնականոն զարգացում ունեցող նրանց հասակակիցների կապակցված խոսքից՝ երեխաների խոսքը համառոտ է, հիմնականում կազմված է պարզ նախադասություններից, բառապաշարն աղքատ է:

Հարցմանը մասնակցած լոգոպեդները միաձայն կարևորելով մինչվիրահատական շրջանում կապակցված խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքը, միևնույն ժամանակ փաստեցին, որ խնդրո առարկայի շուրջ մայրենի լեզվով չկան համապատասխան տեսագործական ուսումնասիրություններ և մեթոդական մոտեցումներ:

Մեր հետազոտության շրջանակներում մեզ հետաքրքրում էր նաև դիմաձնոտային վիրաբույժների մոտեցումը խնդրո առարկայի շուրջ: «Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական դիմադաշտ ունեցող երեխաները ուղղորդվում են արդյոք լոգոպեդական խորհրդատվության» հարցին բժիշկների 75%-ը բացասական էր պատասխանել՝ մեկնաբանելով, որ լոգոպեդական աշխատանքը արդյունավետ է կազմակերպել հետվիրահատական շրջանում: Հետազոտվող հիմնահարցի մանկավարժական տեսանկյունները բժշկական շրջանակներում, մեր կարծիքով, բավարար չի լուսաբանվում:

Մեր կողմից կարևորվել էր նաև այն հարցը, թե այս երեխաների ծնողներն որքանով են իրազեկված մինչվիրահատական շրջանում լոգոպեդական աշխատանքի անհրաժեշտության մասին, ինչպես նաև մեզ հետաքրքրում էր, թե ինչպիսին են այս երեխաների դաստիարակության պայմանները՝ խոսքի զարգացման տեսանկյունից (ինչպե՞ս են վերաբերում երեխայի խնդրին, ապահովում են արդյո՞ք կապակցված խոսքի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ և այլն):

Թիրախային խմբի երեխաների ծնողների սոցիալաբան արդյունքների վերլուծությունը փաստում է, որ ծնողների բավական ստվար զանգված (58%) բավարար չէր պատկերացնում մինչվիրահատական շրջանում լոգոպեդական աշխատանքը, ծնողների միայն 32.5%-ն է արժևորել մինչվիրահատական շրջանում լոգոպեդական աշխատանքների անցկացման կարևորությունը և հրատապությունը:

Այսպիսով, ամփոփելով սոցիալաբան արդյունքները, կարելի է փաստել, որ լոգոպեդների ճնշող մեծամասնության կողմից մինչվիրահատական շրջանում կապակցված խոսքի զարգացմանն ուղղված աշխատանք չի իրականացվում: Միևնույն ժամանակ դիմաձնոտային վիրաբույժների մեծամասնությունը կարևորելով լոգոպեդական աշխատանքը, սակայն խնդրո առարկայի շուրջ համապատասխան իրազեկում չունենալով, այս երեխաներին ժամանակին չեն ուղղորդում լոգոպեդական խորհրդատվության:

Թիրախային խմբի երեխաների ծնողների հարցման արդյունքներն էլ իրենց հերթին ակնառու կերպով վկայում են նաև ծնողների ոչ բավարար

իրազեկվածության մասին:


Վերը նշվածը փաստում է, որ ուսումնասիրվող հիմնահարցը հրատապ է և հետագա փորձարարական ուսումնասիրությունների կարիք ունի:

Երկրորդ գլխի երկրորդ «Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի առանձնահատկությունների հետազոտություն» ենթագլխում ներկայացված են հաստատող փորձարարության արդյունքները, վերլուծվել են բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի առանձնահատկությունները:

Մի շարք հավաստող փորձարարական հետազոտությունների մասնակցել են 3-4 տարեկան 42 երեխա, որոնցից 21-ը՝ մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաներ, և 21-ը՝ նույն տարիքի խոսքի բնականոն զարգացում ունեցող երեխաներ՝ ստուգողական խմբում:

Հետազոտության արդյունքները գնահատվել են Վ. Պ. Գլուխովի, Ռ. Ի. Լալանայի (2004) կողմից առաջարկված նիշային համակարգով՝ մասնակիորեն ձևափոխելով գնահատման չափանիշները և հարմարեցնելով մեր հետազոտության ուղղվածությանը:

Հետազոտության արդյունքներն ակնառու վկայում են, որ փորձարարական խմբի երեխաների կապակցված խոսքն էականորեն տարբերվում է ստուգողական խմբի երեխաների խոսքից, ինչն ավելի է արտահայտվում նրանց մենախոսության մեջ (տրամագիր 1):



1. Ըստ նկարի երկխոսելու կարողության հետազոտում
2. Սյուժետային նկարների շարքով պատմվածք կազմելու կարողության հետազոտում
3. Պատմվածքը վերապատմելու կարողության հետազոտում
4. Առաջարկված պատմվածքը շարունակելու կարողության հետազոտում

Տրամագիր 1 Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի հետազոտման ցուցանիշներ (ըստ առավելագույն միավորների)

Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքը բնութագրվում է հետևյալ կերպ.

Կազմված տեքստերը ծավալով ավելի փոքր են, տեքստում գերակշռում են

համառոտ նախադասությունները, տեքստի շրջանակներում դրսևորվում են պատճառահետևանքային հարաբերությունների արտահայտման դժվարություններ, առկա են խոսքի բառաքերականական ձևակերպման մասնակի խնդիրներ, վերացական նշանակություն ունեցող բառերը սակավ են:

Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի հետազոտության ընթացքը թույլ տվեց փաստել, որ այս երեխաներին բնորոշ են ոչ միայն կապակցված խոսքի, այլ նաև բարձրագույն հոգեկան գործընթացների, մասնավորապես, ուշադրության, հիշողության ձևավորման որոշակի առանձնահատկություններ: Վերը նշված գործընթացներն ապահովում են երեխայի կողմից շրջապատող աշխարհի ակտիվ և բազմակողմանի ուսումնասիրումն ու ճանաչումը, կարևորագույն նշանակություն ունեն մայրենի լեզվի յուրացման՝ բառապաշարի հարստացման, հնչյունային կողմի ձևավորման, խոսքի քերականական կառուցցի զարգացման գործընթացում: Խոսքը և բարձրագույն հոգեկան գործընթացները զարգանում են փոխկապված՝ մտածողության, ուշադրության, հիշողության որակական բնույթը ուղղակիորեն արտացոլվում է խոսքի զարգացման գործընթացում (Ե Ա. Լոգինովա, Ս. Ա. Յուդինա, 2015): Նշված գործընթացների դրսևորումները ևս իրենց հերթին անդրադառնում էին կապակցված խոսքի հետազոտման արդյունքներին: Ուստի հետագա ուսումնասիրությունները միտված էին ուշադրության և հիշողության հետազոտմանը:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ՝ **«Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների խոսքալսողական հիշողության և ուշադրության հետազոտում»** ենթագլխում ներկայացված են խոսքալսողական ուշադրության և հիշողության հետազոտության արդյունքները: Նշված հետազոտությունները մեր կողմից իրականացվել են՝ հիմնվելով Ա. Ռ. Լուրիայի (2006), Գ. Ռ. Շաշկինայի, Լ. Պ. Ջերնովայի, Ի. Ա. Զիմինայի (2003), Ռ. Ս. Նեմովի (2003), Ե. Ա. Անդրոնիկովայի, Ե. Վ. Զաիկայի (2011), Ս. Դ. Զաբրամնայայի (2005), Տ.Բ. Իվանովայի, Վ. Ա. Իլյուսինայի, Մ. Ա. Կոշովկոյի (2011) Ժ. Մ. Գլոզմանի, Ա. Յու. Պոտանինայի, Ա. Ե. Սոբոլևայի (2008) մեթոդական մոտեցումներին՝ փոփոխելով և հարմարեցնելով մեր հետազոտության ուղղվածությանը:

Կատարված հետազոտությունները թույլ տվեցին փաստելու, որ մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաներն որոշակիորեն զիջում են խոսքի բնականոն զարգացում ունեցող իրենց հասակակիցներին, ինչը դրսևորվում է հիմնականում.

- խոսքային ուշադրության անկայունությամբ,
- խոսքային հիշողության ծավալի սահմանափակ լինելով:

Վերը նշված առանձնահատկությունները յուրովի պայմանավորում են այս երեխաների կապակցված խոսքում առկա խնդիրները:

Երկրորդ գլխի չորրորդ՝ **«Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական**

**ռինոլալիա ունեցող երեխաների բառապաշարի և խոսքի քերականական կառույցի հետազոտում» ենթագլխում** ներկայացված և վերլուծված են խոսքի բառաքերականական կողմի հետազոտության արդյունքները:

Բառապաշարի հետազոտությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝

-պասիվ բառապաշարի հետազոտում (ռեցեպտիվ)

-ակտիվ բառապաշարի հետազոտում (պրոդուկտիվ):

Հետազոտության արդյունքները փաստում են, որ փորձարարական խմբի երեխաների բառապաշարն աղքատ է, հիմնականում գերակշռում էին ստույգ նշանակություն ունեցող գոյականներ և բայեր: Բառապաշարում դիտարկվող առանձնահատկությունները մեր կողմից խմբավորվել են հետևյալ կերպ՝ բառի փոխարինում իմաստով նման այլ բառերով, բառի բացթողումներ, բառի փոխարինում դերանունով կամ «անորոշ նշանակությամբ այլ բառով»: Խոսքի քերականական կառույցի հետազոտության շրջանակներում մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

● հոլովական վերջավորությունները ստույգ կիրառելու կարողության


● կապերը և շաղկապները ստույգ կիրառելու կարողության

● ընդարձակ նախադասության կազմում՝ նախադասության անդամները ճիշտ համաձայնեցնելու կարողության դժվարություններ:

Կապակցված խոսքի հետազոտությանն ուղղված հաստատող փորձարարության արդյունքում մեր կողմից բացահայտվել են խոսքային ուշադրության, հիշողության, վերլուծահամադրական գործունեության ձևավորման, խոսքի բառաքերականական կառույցի մի շարք առանձնահատկություններ, որոնք բացասական ազդեցություն են ունենում կապակցված խոսքի բոլոր ձևերի զարգացման գործընթացում: Հետազոտության արդյունքներն ակնառու փաստում են, որ մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ:

Ատենախոսության երրորդ՝ **«Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման ուղիները»**, գլուխը կազմված է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին **«Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման հնարները, միջոցները և մեթոդները»** ենթագլխում ներկայացված և վերլուծված են բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանը միտված հնարները, միջոցները և մանկավարժական պայմանները, ներկայացված է կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Մինչկիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիայով երեխաների կապակցված խոսքի զարգացման լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ

Երրորդ գլխի երկրորդ՝ «Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինուլախա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի բնութագիրը» ենթագլխում մանրամասն ներկայացված է խոսքալսողական ուշադրության և հիշողության, բառաքերականական կառույցի, կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքը:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինուլախա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման համար առաջարկված միջոցների և մեթոդների արդյունավետության փորձարարական հիմնավորումը» ենթագլխում ներկայացված են միամյա փորձարարական ուսուցման արդյունքները, ցույց է տրված մեր կողմից առաջարկվող միջոցների, մեթոդների, հնարների, մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը (Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինուլախա ունեցող երեխաների կապակցված խոսքի հետազոտության ցուցանիշները**

Փորձարկվողները=42	Առաջարկվող հանձնարարությունները	4 նիշ		3 նիշ		2 նիշ		1 նիշ		0նիշ	
		թիվ	%	Թիվ	%	թիվ	%	թիվ	%	Թիվ	%
Փորձ.խումբ n=21	Երկխոսության կազմում պլուստային նկարներին հիմնվելով մինչ փորձ. ուսուցումը	7	33.3	12	57.1	2	9.5	---	---	---	---
	Փորձ. ուսուցումից հետո	19	90.5	2	9.5	---	---	---	---	---	---
Ստուգող. խումբ=21	Երկխոսության կազմում պլուստային նկարներին հիմնվելով	19	90.5	2	9.5	--	--	--	--	---	---
Փորձ. խումբ n=21	Սյուժետային նկարների շարքով պատմվածքի կազմում մինչ փորձ. ուսուցումը	5	23.8	6	28.6	7	33.3	3	14.2	---	---
	Փորձ. ուսուցումից հետո	18	85.7	3	14.3	---	---	---	---	---	---
Ստուգող.խումբ=21	Սյուժետային նկարների շարքով պատմվածքի կազմում	19	90.5	2	9.5	--	--	--	--	---	---
Փորձ.խումբ n=21	Տեքստի վերապատմումմինչփորձ.ուսուցումը	3	14.3	4	19.1	8	38.1	4	19.1	2	9.5
	Փորձ. ուսուցումից հետո	17	80.9	4	19.1	--	--	--	---	---	---
Ստուգող.խումբ=21	Տեքստի վերապատմում	18	85.7	3	14.3	--	--	--	--	---	---
Փորձ. խումբ=21	Առաջարկված պատմվածքի շարունակում մինչ փորձ. ուսուցումը	---	---	7	33.3	6	28.6	5	23.8	3	14.3
	Փորձ. ուսուցումից հետո	14	66.7	7	33.3	--	--	--	---	---	---
Ստուգող.խումբ=21	Առաջարկված պատմվածքի շարունակում	16	76.2	5	23.8	--	--	--	--	---	---

Փորձարարության արդյունքների վերլուծությունը փաստում է

հետազոտվող երեխաների կապակցված խոսքի զարգացման համար մեր կողմից առաջարկված մեթոդական մոտեցումների դրական ազդեցության մասին:

Ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ փորձարարական ուսուցումից հետո փորձարարական խմբի երեխաների ցուցանիշները գրեթե չեն տարբերվում ստուգողական խմբի երեխաների ցուցանիշներից

Այսպիսով՝ մեր կողմից իրականացված փորձարարության արդյունքներն ապացուցեցին առաջադիր վարկածի հավաստիությունը:

### **Ջեռնություններ.**

1. Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ունեցող երեխաներին բնորոշ են ոչ միայն ծայնի և հնչարտաբերման խանգարումներ, այլ նաև կապակցված խոսքի ձևավորման որոշակի առանձնահատկություններ, որոնք զգալիորեն դժվարեցնում են նրանց հաղորդակցման գործընթացը: Այս համատեքստում առավել կարևորվում է մինչվիրահատական շրջանում կապակցված խոսքի զարգացմանն ուղղված համակարգված լոգոպեդական աշխատանքի անհրաժեշտությունը, սակայն այս խնդրին մինչ այժմ պատշաճ մակարդակով ուշադրություն չի դարձվել: Բացակայում են մայրենի լեզվով մշակված հատուկ հանձնարարությունները, վարժությունները, տեքստերը՝ միտված այդ երեխաների կապակցված խոսքի զարգացմանը: Նշված երեխաների հետ խնդրո առարկայի շուրջ լոգոպեդական աշխատանքները պետք է իրականացվեն գիտական ուսումնասիրությունների և դրանցում կիրառվող ուղիների, միջոցների, մեթոդների փորձարարական հիմնավորման ճանապարհով:

2. Խնդրո առարկայի շուրջ սոցիալացման արդյունքներն ակնառու փաստում են, որ այս երեխաների հետ աշխատող լոգոպեդների ճնշող մեծամասնությունը մինչվիրահատական շրջանում աշխատում է ծայնի և հնչարտաբերման խանգարումների կարգավորման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման ուղղությամբ: Հարցմանը մասնակցած լոգոպեդների միայն 21.6%-ն է լոգոպեդական աշխատանք իրականացնում նաև կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ: Մինևույն ժամանակ հարցմանը մասնակցած բոլոր լոգոպեդները միաձայն փաստում են, որ այս երեխաները կապակցված խոսքի զարգացման ցուցանիշներով որոշակիորեն զիջում են խոսքի բնականոն զարգացում ունեցող իրենց հասակակիցներին: Սակայն լոգոպեդներն ընդգծում են, որ բացակայում են խնդրո առարկայի շուրջ մայրենի լեզվով համապատասխան մեթոդական մոտեցումներ: Հետազոտվող հիմնախնդրի անբավարար մշակվածությունը, կապակցված խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգի բացակայությունը, հիմնախնդրի վերաբերյալ մասնագետների իրազեկվածության ցածր մակարդակը զգալիորեն նվազեցնում են մինչվիրահատական շրջանում բաց

օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման արդյունավետությունը:

3.Ատենախոսության մեջ ներկայացված են նոր մոտեցումներ, որոնք միտված են մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Կատարված գիտահետազոտական աշխատանքը թույլ է տալիս դրական գնահատել մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի ձևավորման նախադրյալների՝ բարձրագույն հոգեկան գործընթացների (մասնավորապես, խոսքային հիշողության, ուշադրության, վերլուծահամադրական գործունեության) և խոսքի բաղադրիչների (մասնավորապես, խոսքի բառաքերականական կառույցի) զարգացման մոտեցումները և լոգոպեդական աշխատանքի հետևյալ ուղղությունները՝ երկխոսության զարգացում, մենախոսության զարգացում՝ սյուժետային նկարների շարքով պատմվածք կազմելու կարողության, պատմվածք վերապատմելու կարողության, առաջարկված պատմվածքը ստեղծագործաբար շարունակելու կարողության զարգացում: Նշված ուղղություններով մշակված է լոգոպեդական աշխատանքի օրինակելի համակարգ, ներկայացված են վարժություններ, առաջադրանքներ, խաղեր, տեքստեր, և դրանց անցկացման մեթոդական մոտեցումներ: Ատենախոսության մեջ հիմնավորված է դրանց կիրառման լայն հնարավորությունը:

4.Ատենախոսությունում ցույց է տրված մինչվիրահատական շրջանում բաց օրգանական ռինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման համար առաջարկվող մոտեցումների արդյունավետությունը, մենախոսության և երկխոսության տիրապետման կարողությունների զարգացումը: Այսպես՝

- եթե մինչ փորձարարական ուսուցումը փորձարարական խմբի երեխաների ընդամենը 23.8%-ն էր լիարժեք հաղթահարել սյուժետային նկարներին հիմնվելով պատմվածք կազմելու հանձնարարությունը, ապա փորձարարական ուսուցումից հետո այս ցուցանիշը կազմել է 85.7%:

- եթե մինչ փորձարարական ուսուցումը փորձարարական խմբի երեխաների ընդամենը 14.2%-ն էր լիարժեք հաղթահարել տեքստ վերապատմելու հանձնարարությունը, ապա փորձարարական ուսուցումից հետո այս ցուցանիշը կազմել է 80.9%:

- եթե մինչ փորձարարական ուսուցումը առաջարկված պատմվածքը շարունակելու հանձնարարության դեպքում փորձարարական խմբի երեխաներից ոչ մեկի մոտ առավելագույն ցուցանիշ չի գրանցվել, ապա փորձարարական ուսուցումից հետո այս ցուցանիշը գրանցվել է երեխաներից 66.7%-ի մոտ:

Միամյա մանկավարժական փորձարարությունում մեր կողմից ներդրված կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ առաջարկվող մոտեցումները

մինչվիրահատական շրջանում բաց օրգանական դինոլալիա ունեցող երեխաներին թույլ տվեցին ուսումնասիրվող բոլոր չափանիշներով հասնել դրական արդյունքի:

5.Անցկացված հետազոտության արդյունքները փաստում են մինչվիրահատական շրջանում բաց օրգանական դինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման համար առաջարկված մոտեցումների արդյունավետության մասին: Նշվածը հաստատվում է առաջարկված միջոցների, մեթոդների և պայմանների կիրառմամբ, գործնականում դրանց ներդրմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ **հրատարակումներում**.

1.Աղլոյան Լ.<. Լոգոպեդական աշխատանքների կարևորությունը բաց օրգանական դինոլալիայի մինչվիրահատական շրջանում, Մանկավարժական միտք, 2013,№ 1-2, էջ 254-257:

2.Աղլոյան Լ.<. Բաց օրգանական դինոլալիայով երեխաների կապակցված խոսքի զարգացումը մինչվիրահատական շրջանում, Մանկավարժական միտք, 2013, №3-4, էջ 194-198:

3. Աղլոյան Լ.<. Ռինոլալիան, որպես շտկողամանկավարժական և բժշկության հիմնահարց, Մանկավարժական միտք, 2014, №1-2, էջ 240-245:

4.Աղլոյան Լ. <. Բաց օրգանական դինոլալիայով երեխաների կապակցված խոսքի զարգացումը մինչվիրահատական շրջանում ակնառու /պատկերավոր /մոդելավորման մեթոդի միջոցով, Մանկավարժական միտք, 2014, №3-4, էջ 248-252:

5.Աղլոյան Լ. <. Մասնագետների իրազեկվածությունը բաց օրգանական դինոլալիայով երեխաների կապակցված խոսքի զարգացման առանձնահատկությունների մասին մինչվիրահատական շրջանում, Մանկավարժական միտք, 2016, №3-4, էջ 439-442:

6.Կարապետյան Ս.,Գ., Աղլոյան Լ. <., Մինչվիրահատական շրջանում բաց օրգանական դինոլալիա ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման հնարները, միջոցները և մեթոդները, Ակունք գիտական հոդվածների ժողովածու, 2018,№ 1(18),էջ 321-327:

АДЛОЯН ЛИЛИТ АРУТЮНОВНА

## РАЗВИТИЕ СВЯЗНОЙ РЕЧИ У ДЕТЕЙ С ОТКРЫТОЙ ОРГАНИЧЕСКОЙ РИНОЛАЛИЕЙ В ДООПЕРАЦИОННОМ ПЕРИОДЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук, по специальности 13.00.01 «Теория и история педагогики»(Специальная педагогика).

Защита диссертации состоится 31 января 2019 г., в 12.00 на заседании специализированного совета 020 «Педагогика» ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

### РЕЗЮМЕ

**Актуальность исследования:** По статистике Всемирной организации здравоохранения частота рождаемости детей с врожденными расщелинами верхней губы и неба составляет 1:700.

В научно-методической литературе по данной проблеме представлены ряд исследований (Вансовская Л.И 2000, Василева Е.П.2011,Гончаков Г.В, Притико А. Г., Гончакова С.Г, 2009, Чекусова Ю.Г, 2015 и др),предложены разные пути его решения, однако с позиций нашего исследования данная проблема почти не рассматривалась.

Развитие связной речи имеет важнейшее значение для общего развития ребенка, а впоследствии и для полноценного усвоения школьной программы.

Недостаточная же изученность особенностей развития связной речи у данной категории детей, теоретическая и практическая неразработанность многих ее вопросов значительно затрудняет организацию и проведение логопедической работы в дооперационном периоде. Поэтому разработка специальных средств и методов логопедической работы для развития связной речи у данного контингента детей на армянском языке имеет важное значение, что и определяет актуальность исследования, ее теоретическую, практическую значимость.

**Цель исследования:** Разработать средства и методы логопедической работы для развития связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде.

#### **Задачи исследования:**

1.Изучить современные подходы развития связной речи в общей и специальной педагогике

2.Изучить постановку логопедической работы с детьми с открытой органической ринолалией в дооперационном периоде в РА

3.Выявить особенности развития связной речи у детей с открытой

органической ринолалией в дооперационном периоде

4 разработать средства и методы развития связной речи у детей с органической открытой ринолалией и экспериментально обосновать эффективность их применения.

**Научная новизна исследования:**

- изучены подходы логопедической работы с детьми с открытой органической ринолалией в дооперационном периоде в РА

- выявлены особенности развития связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде

- экспериментально выявлены и определены предпосылки, которые затрудняют полноценное развитие связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде.

- разработаны и внедрены в логопедическую практику средства и методы для развития связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде и определены педагогические условия их применения.

- разработаны на армянском языке специальные игры, упражнения, задания, тексты для развития связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде

- разработаны подходы методической помощи семьям воспитывающих детей с открытой органической ринолалией.

**Теоретическая значимость исследования.** Теоретически обоснована современная методология развития связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде. Результаты исследований дополняют специальную педагогику новыми подходами по развитию связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде.

**Практическая значимость** исследования состоит в разработке и внедрении в логопедическую практику методических подходов, средств, а также специальных игр, заданий и текстов на армянском языке для развития связной речи у детей с открытой органической ринолалией в дооперационном периоде.

**Апробация результатов исследования.** Апробация работы проводилась в форме обсуждений на заседаниях кафедр логопедии и восстановительной терапии, Специальной педагогики и психологии АГПУ им. Х. Абовяна.

По теме диссертации опубликовано 6 статей.

**Структура диссертации.** Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения. Диссертация изложена на 131 страницах компьютерного текста, содержит 16 таблиц, 8 диаграмм и 4 приложения.

Lilit H. Adloyan

## ARTICULATED SPEECH DEVELOPMENT IN CHILDREN WITH OPEN ORGANIC RHINOLALIA IN PREOPERATIVE PERIOD

*Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, speciality 13.00.01, "Theory of Pedagogy and History" (Special Pedagogy).*

*The defence of the thesis will be held at 12.00 on January 31, 2019, at the session of Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan: 0010, 17 ave. Yerevan.*

### SUMMARY

**Actual relevance of the theme:** Within the cluster of developmental disorders, there is a considerable number of children with inborn cleft lip and cleft palate. According to the data provided by World Health Organization (WHO), the ratio of this issue is 1 per 700 births.

The articulated speech is a key to children's overall development, further on, influencing the respective comprehensive assimilation of the school curriculum by the child.

The import of the research might also be derived from another fact – the concerns on the proper process and peculiarities of articulated speech formation among the children with such problems, as well as, the pertinent approaches – to be necessarily applied by speech therapists in the preoperative period for the appropriate ultimate development – appear to be still vaguely elucidated.

The relevance of the research is also grounded by the lack of Armenian-language researches on the subject-matter issues, respective drills, means, methodological guidance aimed at the formation and development of articulated speech among the children with open organic rhinolalia in preoperative period. The incomplete theoretical and practical coverage of the issue is an additional supporting argument in favour of the relevance of this research and its theoretical, applied and social significance.

**The aim of this research is tackled** via the design of target-oriented methods and means aimed at preoperative development of articulated speech in children with open organic rhinolalia.

#### **The objectives of research are:**

To research into the modern approaches to the development of articulated speech stated within both General and Special Pedagogies;

To study the actual state of affairs in the preoperative speech therapy activities

comprising the children with open organic rhinolalia in the Republic of Armenia;  
To reveal the peculiarities of the articulated speech development among the children with open organic rhinolalia;  
To develop pertinent pedagogical approaches and means targeting the children with open organic rhinolalia and to provide the respective empirical basis of the efficiency of the means applied;

**The novelty of the research is as follows:**

- a detailed research is provided on the locally applied approaches in the speech therapy activities aimed at the children with open organic rhinolalia in the Republic of Armenia;
- the peculiarities of the articulated speech among the children with open organic rhinolalia have been revealed;
- the experiment-based investigations and analyses of preoperative articulated speech development disincentives among the children with open organic rhinolalia have been provided;
- the respective ways, means, methods and pedagogical pre-settings necessary for their implementation have been developed and, in the preoperative period, factually implemented in order to boost the articulated speech development among the children with open organic rhinolalia;
- a set of special games, drills, tasks, and texts have been designed in Armenian to be applied for developing articulated speech among the children with open organic rhinolalia in preoperative period;
- the respective methodological guidance has been developed in order to support the families of the children with open organic rhinolalia.

**The theoretical asset of the research:** The research theoretically substantiates the respective up-to-date methodology of articulated speech development among the children with open organic rhinolalia in the preoperative period.

**The applied lead of the research:** The research asserts a coordinated and implemented set of means, practices, methods, approaches, as well as Armenian-language games, assignments, tasks, and drills – all aimed at the development of articulated speech among the children with open organic rhinolalia in preoperative period.

**Thesis volume and structure**

The thesis is submitted on 131 printed pages comprising introductory part, three chapters, conclusion part, the list of references (bibliography) and appendices. The original manuscript contains 16 tables, 8 diagrams, and 4 appendices.

The research proceedings have been published in 6 articles prior to the defence.

